Բառարանը բովանդակում է շուրջ 25 000 արաբերեն բառ։ Նկատի ունենալով արաբերեն լեզվի դժվարությունները, բառարանում ընդգրկված բոլոր արաբերեն բառերը շեշտավորված են, նշանակված են նրանց հոմանիշները, հոգնակիները և բայական ձևերը։ Արմատական բայերը ցույց են տրված ատղանիշներով, որոնցից հետո տրված են ածանցումները։ Բառարանում զետեղված է նաև համառոտագրությունների ցանկ՝ հայերեն և արաբերեն լեզուներով։

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

3. ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Անդրեասյան, Խոհեր (գրական-քննադատական), *Բեյրութ, Հրատարակչություն «Անի», 1961, 258 էջ։*

Գրքում ամփոփված են հեղինակի գրականագիտական ուսումնասիրությունները ու հոդվածները, ինչպես նաև ճանապարհորդական նոթերը։ «Գաղութահայ գրականության մասին» հետազոտությունը նվիրված է 1920—1948 թթ. սփյուռքահայ գրականության զարգացման հարցերին։ «Ազգայինը գրականության մեջ», «Գրական ներշնչումները աղբյուրները» հոդվածներում հեղինակն անդրադառնում է գրական վարպետության խնդիրներին։ «Խոհեր» գրքում զետեղված են նաև գրական-կենսագրական հակիրճ ակնարկներ՝ նվիրված Մ. Խորենացուն, Խ. Աբովյանին, Հ. Թումանյանին, Վ. Տերյանին, Գ. Զոհրապին, Վ. Թեքեյանին և այլ դասական գրողների։ «Դեպի Հայաստան» խորագրով ուղեգրությունը պատմում է 1936 թ. Սովետական Հայաստան հեղինակի կատարած առաջին այցելության մասին։

Հարություն Պարուրյան, Հուշեր Թոմարզայեն, *Բեյրութ, տպ. Տոնիկյան, 1960, 290 էջ։*

Գրքում կարելի է գտնել ազգագրական, պատմա-աշխարհագրական տեղեկություններ ու տվյալներ Կեսարիայի Թոմարզա ավանի վերաբերյալ։ Հուշերում զգալի տեղ է հատկացված Թոմարզայում տարածում գտած տարազների, տնային իրերի, ինչպես նաև ազգաբնակչության սովորույթների, նիստուկացի, վանքերի, կրթական-կրոնական կյանքի նկարագրությանը։

«125 տարի ի սպաս ժողովրդական լուսավորության»: *Պլովդիվի Ստեփան Շահումյանի անվան պետական հայկական դպրոցի հիմնադրման 125-ամյա հոբելյանին նվիրված ժողովածու (կազմեցին՝ Կ. Ասաձրյան, Ս. Համբարձումյան, Ր. Թյուֆենքճյան), Սոֆիա, 1959, 64 էջ։*

1959 թ. լրացավ Պլովդիվի հայկական դպրոցի հիմնադրման 125 տարին։ Այդ հոբելյանը հանդիսացավ ամբողջ բուլղարահայ գաղութի մշակութային տոնը։ Այս գիրք-ալբոմի մեջ հավաքված են դպրոցի պատմությանն ու ներկային վերաբերող նյութեր, հոբելյանի առթիվ գրված հոդվածներ, հուշեր, ողջույնի հեռագրեր ու նամակներ, դպրոցի նախկին ուսուցիչների ու նշանավոր սաների անվանացանկեր, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարներ։

Գիրքը բացվում է Ստ. Շահումյանի հեղափոխական գործունեությանը նվիրված հոդվածով։ Հուզիչ է դպրոցի մանկապարտեզի (հիմնադրված 1894 թ.) վարիչ Մ. Քեշիշյանի «Կարմիր ծաղիկ» խորագրով հուշը, ուր պատկերված են մանկապարտեզի մռայլ անցյալը և պայծառ ներկան։ Դպրոցի 1896 թ. շրջանավարտ, բուլղարական կոմպարտիայի ականավոր գործիչ Ստեփան Շահբազյանի կյանքին ու հերոսական գործունեությանն է նվիրված «Մեր պարծանքը» հոդվածը։ Ստ. Շահբազյանը հերոսի մահով զոհվել է 1923 թ. Սեպտեմբերյան ժողովրդական ապստամբության ժամանակ։

«Հեռավոր անցյալը» հոդվածը ընդգրկում է դպրոցի պատմությունը՝ հիմնադրման օրվանից (1834) մինչև 1878 թ.։ Հոդվածում հետաքրքրական պատմա-ազգագրական տեղեկություններ կան Պլովդիվի հայ հին գաղութի մասին։ Գրքույկը փակվում է սովետահայ արձակագիր, դպրոցի նախկին ուսուցիչ Հրանտ Հրահանի «Գաղափարական պայքարի և ազգային դաստիարակության միջնաբերդը» հոդվածով։

Ժամկոչյան Բ. Ա., Տպավորություններ միամյա շրջապտույտես. *Հրատարակություն Սահակյան բարձրագույն վարժարանի, Բեյրութ. 1958—1959, 470 էջ։*

Գրքում ամփոփված են մանկավարժ Բենիամին Ժամկոչյանի ճանապարհորդական նոթերը 1956—1957 թթ. Հարավային Ամերիկայում կատարած շրջագայություններից։ Ուշագրավ տվյալներ և տեղեկություններ կան Լատինական Ամերիկայի հայ գաղութների կրթական, մշակութային, ազգային-եկեղեցական կյանքի, հայրենակցական միությունների վերաբերյալ։

Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ